

ՅԱԶԼՈՎԵՑ ՔԱՂԱՔԻ ՀԱՅ ԳԱՂԹՕՋԱԽԸ

(Համառոտ պատմություն)

Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Յազլովեցը Պոդոլյեի հինավուրց և նշանավոր բնակավայրերից է, որը կարևոր դեր է խաղացել Ուկրաինայի ու Լեհաստանի քաղաքական ու տնտեսական կյանքում: Օլխովեց գետակի գեղատեսիլ հովտում կառուցված, առևտրական բանուկ ճանապարհի վրա գտնվող այդ քաղաքը հին ժամանակներից ի վեր եղել է նաև Պոդոլյե հասած հայ գաղթականների նախընտրած վայրերից մեկը: Յազլովեցի հայ գաղութը ունեցել է ինքնավարության իրավունք և Կամենիցից հետո հայկական ամենանշանավոր կենտրոնն էր Պոդոլյեում: Այնտեղ կային հայկական եկեղեցիներ, գործում էին աշխարհիկ ու հոգևոր դատարաններ, հայոց դպրոց, եղբայրություններ: Այնտեղ գրվել ու նկարազարդվել են մի շարք հայերեն ձեռագրեր: Հայ և օտար մի քանի հեղինակներ (Ստ. Գյուվեր Ագոնց, Մ. Բժշկյան, Ս. Բարոնշ, Պ. Անտոնևիչ, Զ. Օբերտինսկի և ուրիշներ) վեր են հանել արժեքավոր նյութեր յազլովեցահայերի վերաբերյալ, ասվել են մի շարք խնդիրների ուշագրավ պարզաբանումներ, բայց գաղութի ամբողջական պատմությունն առ այսօր բավարար չափով ուսումնասիրված չէ: Լեյսու փորձ է արվում համառոտ ձևով ուրվագծելու Յազլովեցի հայ գաղութի պատմությունը սկզբից մինչև վերջնական ձուլումն ու քայքայումը:

Մինչև այժմ պարզված չէ, թե հայերը երբ են հաստատվել Յազլովեցում: Շփոթված չէ անգամ Յազլովեցի հիմնադրման ժամանակը: Պահպանված տեղեկությունները, որ գլխավորապես խարսխված են բանավոր զրույցների և ավանդությունների վրա, այնքան էլ համոզիչ չեն: Մինաս Բժշկյանը, որ ավելի քան մեկ և կես դար առաջ եղել է Յազլովեցում ու մասնավորապես հետաքրքրվել այդ հարցով, ժամանակի մասին ոչինչ չի գրում: Նա բերել է միայն յազլովցի տարեց մարդկանց պատմածները. «Օճերը պատմեցին մեզ. — գրում է նա, — թէ Քէֆէցի Հայք յՕոմեանի դաշտէն աստ եկեալ բնակեցան»²: Լեհ քա-

¹ Հայկական աղբյուրներում այս քաղաքի անունը հիշվում է «Եազլով», բայց ավելի հաճախ «Եազլովցա» ձևով: 1618 թ. «Ավետարանի» հիշատակարանում այն անվանված է «գիւղաքաղար Եազլովցայ» (Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5655, էջ 150ա): Ավելի ուշ շրջանի հեղինակները կոչում էին այն «մայրաքաղաք Եազլովցա» (1645 թ. «Ծագմտարանի» և Սոյատինի «Ճաշոցի» հիշատակարաններում, տե՛ս Մ. Բժշկյան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վենետիկ, 1830, էջ 130): Բայց մեծ մասամբ անվանվել է «Եազլովցա քաղաք»: Յազլովեցն այժմ շրջանային ենթակայության բնակավայր է Ուկր. ՍՍՀ Տերնոպոլի մարզի Բուչաչի շրջանում: Բնակչության թիվն է 1223: 1947 թ. վերանվանվել է և կոչվում է այժմ Յարյունովկա:

² Մինաս Բժշկյան, նշվ. աշխ., էջ 130: Ս. Բարոնշը լեհերեն թարգմանությամբ մեջ բերելով Բժշկյանի գրածները Յազլովեցի մասին, «Օոմեանի դաշտը» նույնացրել է Կամենիցի մոտ գտնվող Օրմյանե դյուդի հետ (տե՛ս S. Barącz, Pamiątki Jazłowieckie, Lwów, 1862, էջ 16):

հանա Ֆրանցիշեկ Սիարչինսկու գրքում նշված է հայերի գաղթի մոտավոր ժամանակը: Ըստ նրա 1250 թ. Ռուսիայում կային հայկական երեք եկեղեցիներ՝ Լվովում, Կամենեց-Պոդոլսկում և Յազլովեցում: Այս վերջին վայրում հայկական եկեղեցին հիմնել են Ղրիմից գաղթած հայերը, որոնք իրենց դատարաններում ու եկեղեցական դրագրություններում օգտագործում էին թաթարերենը³: Լեհահայ պատմաբան Սադոկ Բարոնշը համարյա նույնությամբ կրկնում է Սիարչինսկուն և նշում, որ այդ ամենը «ժողովրդական ավանգազրույց է» և դժվար է որոշել, թե երբ են հայերը եկել Յազլովեց⁴:

1882 թ. լույս ընծայված «Լեհական թագավորության և այլ սլավոնական երկրների աշխարհագրական հանրագիտարանում» 1250 թ. Յազլովեցում հայ եկեղեցու գոյության մասին վերոհիշյալ տեղեկությունը նույնպես համարվում է առասպել, բայց միաժամանակ բերվում է մեկ այլ ավանդություն, որը դարձյալ Յազլովեցի հիմնադրման պատիվը վերագրում է հայերին. հիմնադրման ժամանակը նշված է XV դարը⁵:

Ֆ. Սիարչինսկու տեղեկությունները, սակայն, չեն հաստատվում պատմական սկզբնաղբյուրներով⁶: Այդուհանդերձ 1250 թ. այդ քաղաքում հայ գաղութի առկայության մասին ավանդությունը, ինչպես և քաղաքը հայերի կողմից հիմնադրած լինելու ենթադրությունը հիշատակվում են Յազլովեցի պատմությանը նվիրված գործերում: Ուկր. ՍՍՀ քաղաքների ու գյուղերի պատմության Տերնոպոլի մարզին նվիրված հատորի մեջ, որի հրատարակության պատրաստվող ձեռագրին ծանոթացանք Տերնոպոլ քաղաքում 1972 թ. ամռանը, «Յազլովեց» հոդվածի հեղինակներ Բ. Ի. Մուդրին և Ս. Դ. Օլեսյուկը առավել ճշմարտանման են համարում քաղաքը XIV դարի առաջին կեսին հիմնադրված լինելու վերաբերյալ մեր դարի 30-ական թթ. առաջ քաշված կարծիքը⁷:

Վարչավայրի համալսարանի պրոֆեսոր Զ. Օբերտինսկին, որն ընդարձակ ուսումնասիրություն է նվիրել լեհահայոց պատմությանը, գրում է, թե Յազլովեցի մեջ հայկական ժողովրդապետության կամ ծխի ծագման մասին որևէ հաղորդագրություն և հաստատագիր գոյություն չունի: «Այնտեղի բնակչության 1530 և 1542 թթ. մնացած տոմարների կամ անվանացանկերի մեջ կաթոլիկ հոգևորականների և ռուսներն պոպոնեզներու կհանդիպինք, բայց հայեր չենք գտնիր»: Այնուհետև նա գրում է, որ Յազլովեցի հայ եկեղեցու շինարարության տարին անստույգ է, «բայց XVI դարի վերջերի և XVII դ. սկզբների կնիքն ունի իր վրա»: «...Այս եկեղեցվո հիմնարկությունն են տարիներ, գոնե տասնյակ մը տարիներ առաջ համեստ ու փայտաշեն եկեղեցի մը գոյություն ունեցած ըլլա»⁸:

³ „Galicya, jej ziemia, plody i ludy z pism pośmiertnych księdza Franciszka Siarczynskiego“, Dodatek tygodniowy przy „Gazecie Lwowskiej“, 41, dnia 10. Lwów, 1857, էջ 167.

⁴ S a d o k B a r ą c z, Rys dziejów ormiańskich, Tarnopol, 1869, էջ 88—89.

⁵ „Słownik geograficzny królestwa Polskiego i innych krajów słowiańskich“, tom III, Warszawa, 1882, էջ 538.

⁶ S k ւ Կ a. D a c h k և v y t c h, L'établissement des arméniens en Ukraine Pendant les XIe-XVIIIe siècles, „Revue des études arméniennes“, nouvelle série, tome V, Paris, 1968, էջ 356—357.

⁷ „Історія сіл і міст Укр. РСР, Тернопільська обл.“ (ձեռագիր):

⁸ Զ. Օբերտինսկի, Լեհահայերը և անոնց Անդրեաս արքեպիսկոպոսը Յազլովեցի մեջ, «Հանդես ամսօրյա», 1962, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 463, 468.

Նախ, նշենք, որ Յաղլովեցի հայկական եկեղեցու ճակատին փորագրված և մինչև այսօր պահպանված հայերեն արձանագրությունից հայտնի է, որ այն կառուցվել է 1551 թ.: Եթե մինչ այդ էլ «գոնե տասնյակ մը տարիներ առաջ համեստ ու փայտաշեն» եկեղեցի կարող էր շինված լինել նրա տեղը, ինչպես գրում է Օբերտինսկին, ապա հայ բնակչության առկայությունն այդ քաղաքում շատ ավելի վաղ է եղել, քան կարծում է Օբերտինսկին⁹:

Թե՛ Բժշկյանի, և թե՛ Սիարչինսկու և Բարոնշի մոտ խոսվում է դաղթականների Ղրիմից ելած ու թաթարախոս լինելու մասին: Ավանդությունն այս հարցում ձգարտանման է: Խոսքն այստեղ, հավանորեն, վերաբերում է Կաֆայի հայերի մեծ գաղթին, որը տեղի ունեցավ թուրքերի կողմից այդ քաղաքի գրավումից (1475 թ.) անմիջապես հետո, երբ կաֆացի հայերի մի զգալի մասը հեռացավ դեպի Պոդոլյեի կենտրոնները: Կարելի է ենթադրել, որ այդ տարիներին էլ Յաղլովեց պետք է հասած լինի Ղրիմահայերի առաջին ալիքը: Բայց այդ հարցը դեռևս ուսումնասիրման կարիք ունի:

Յաղլովեցն իր շրջակայքով սկզբում մտնում էր Գալիցա-Վոլինյան իշխանության, հետագայում՝ XIII դարի կեսից մինչև XIV դարի 20-ական թթ.՝ Լիտվական պետության մեջ: Բնակավայրի շատ հարմար դիրքը, շրջակա զովասուն անտառները, սառնորակ աղբյուրներն ու գեղեցիկ բլրակները, որոնցից մեկի վրա հետագայում վեր խոյացան յաղլովեցյան բերդի ատամնավոր պարիսպները, չէին կարող չդրավել Պոդոլյեի բնակչության ուշադրությունը: XIV դարում այն արդեն մի փոքրիկ քաղաք էր: Կազիմիր Մեծի օրոք (1340—1370 թթ.) Յաղլովեցն ընկնում է լեհական տիրապետության տակ: XV դարի կեսերին այդ քաղաքը հանդես է գալիս որպես առևտրի գավառային կենտրոն¹⁰: Յաղլովեցի վրայով անցնող, Լվովը Վալախիայի հետ կապող շատ բանուկ «Վիառեգիա» կոչված ճանապարհը¹¹ մեծապես նպաստում էր Յաղլովեցի զարգացմանը: Այնտեղ կազմակերպվում են տոնավաճառներ, որոնց գնալով մեծացող համբավն ու հաջողությունը սկսում են անհանդստացնել Լվովի վաճառականներին: Ազատվելու համար այդ լուրջ մրցակցությունից, Լվովցիները ստիպված են լինում դիմել լեհաստանի թագավորին և խնդրել արդելելու յաղլովեցյան տոնավաճառները¹², բայց դա անկարելի էր, որովհետև այդ տոնավաճառները մեծ օգուտներ էին բերում: Հետագայում Յաղլովեցի նշանակությունը առևտրի մեջ ավելի մեծացավ, այնտեղի տոնավաճառներին մասնակցում էին ոչ միայն Գալիցիայից, այլև արտասահմանից եկած վաճառականներ¹³: 1578 թ. Յաղլովեցում կար 247 տուն, բնակիչների թիվն էր՝ 1235¹⁴: XVI դարի երկրորդ կեսին Յաղլովեցը Ռեչ-Պոսպոլիտայի կազմի մեջ եղած Պոդոլյան վոյեվոդության

⁹ Հարկ է նշել, որ Յաղլովեցի հայ եկեղեցու, ինչպես նաև նրա մոտ կառուցված «արքեպիսկոպոսական տան» վերաբերյալ տեղեկությունները Զ. Օբերտինսկուն է հաղորդել դոկտ. սրբ. Զր. Հարնունգը, որը, սակայն «այլևս անկարող է այդ ապացուցելու, զի նրա ուսումնասիրության արդյունքները այս պատերազմի ժամանակ Վարշավայի մեջ ոչնչացել են» (տե՛ս Զ. Օբերտինսկի, նշվ. աշխ., էջ 463):

¹⁰ «Історія сіл і міст. Укр. РСР, Тернопільська обл.» (ձեռագիր):

¹¹ Զ. Օբերտինսկի, նշվ. աշխ., էջ 466:

¹² М. Грушевський, Історія України и Руси, т. VI, Київ—Львів, 1963, էջ 320:

¹³ О. С. Компан, Міста України в другій половині XVII ст., Київ, 1963, էջ 320:

¹⁴ «Історія сіл і міст...» (ձեռագիր):

66 քաղաքների մեջ իր նշանակությամբ երրորդն էր՝ Կամենեց-Պոդոլսկից ու Բարից հետո¹⁵։

Դեռևս XV դարում Յազլուվեցն ու շրջապատը Բուչացկի իշխանական տոհմի ժառանգական սեփականությունն էր. սովորության համաձայն այդ տոհմը ստանում է իր գլխավոր աթոռանիւտի՝ Յազլուվեցի անունը և սկսում կոչվել Յազլուվեցկի։ Հետագայում քաղաքն անցնում է Կոնեցպոլսկիներին։ Անհրաժեշտ է նշել, որ Յազլուվեցկի և Կոնեցպոլսկի լեհ իշխանները միանգամայն բարյացակամ վերաբերմունք ունեին հայ գաղթականների նկատմամբ և այդ բանը թելադրված էր նրանց իսկ անձնակառն շահերից։ Գաղթական հայերը զարկ էին տալիս արհեստներին ու առևտրին, նպաստում այդ վայրերի տնտեսական զարգացմանը, իսկ վտանգի դեպքում զենքը ձեռքներին ակտիվ մասնակցություն էին ունենում երկրի պաշտպանության գործին։ Հետևապես իշխանների համար ձեռնտու էր հայերի ներգաղթն իրենց տիրույթները և նրանք ամեն ձևով աշխատում էին նպաստել դրան։

Յազլուվեցի հայերի իրավական վիճակն արտացոլող հնագույն վավերաթուղթը Յան Եժի Ռադզիվիլի 1615 թ. դեկտեմբերի 15-ի արտոնագիրն է, որ հրապարակված է Ս. Բարոնշի կողմից¹⁶, իսկ հայերեն թարգմանությունը լույս է տեսել «Արարատ» ամսագրում։ Ստորև տալիս ենք այդ թարգմանությունը.

«Ներկայանալով մեզ,— ասված է այդ արտոնագրում,— մեր Յազլուվեց քաղաքի հայերը մեզ խնդրամատույց եղան, որ մենք, ինչպես որ խոստացել էր հանգուցյալ Հերոնիմ Յազլուվեցկին, Պոդոլյեի վոյեվոդան և որի հանկարծական մահի պատճառով խոստումը չկարողացավ կատարվել, թույլ տանք իրենց տուն ու տեղ շինելու և գույք ձեռք բերելու, և թե իրենք, կամենալով ավելի բարեշեն դարձնել քաղաքը, մտադրություն ունեն ուրիշ տեղերից հայեր բերելու, այս իսկ պատճառով մենք մեր համաձայնությունն ենք հայտնում, որ ոչ միայն նրանք, որոնք վաղուց ի վեր գաղթել են մեր քաղաքը, այլև նրանք, որ պետք է գան, իրավուք ունեն հողեր գնել ու շինություններ անել և արտոնագրի բոլոր ազատություններից օգտվել։ Բայց եթե պատահած է, որ մեկն այստեղ տուն ու տեղ է շինել և հետո այլևս չի ուզեցել այստեղ մնալ, այդպիսիներին կամ նրանց հաջորդներին թույլ է տրվում հոժար կամոք դուրս գալ քաղաքից՝ տալով միայն մի որոշ գումար դուրս գալու համար։

Մենք տալիս ենք հայերին արոտատեղիներ (ցուլց են տրված սահմանները՝ ծան. թարգմանչի— Վ. Գ.) և նույն ժամանակ հրամայում ենք մեր պաշտոնյաներին, որ ոչ ոք չհամարձակվի վնաս հասցնել այս տեղերին։ Այլև մենք թույլ ենք տալիս հայերին ունենալ իրենց համբարները և դատաստանական գործերում Կամենիցի նման ղեկավարվել իրենց օրենքներով։

Այս արտոնագրով մենք աղատ ենք թողնում նրանց տները հարկերից և հրամայում ենք, որ մեր պաշտոնյաներից ոչ մեկը չհամարձակվի նեղել նրանց առևտրի մեջ, որի համար մենք նշանակում ենք հայերին շուկաներում ազատ տեղեր, որպեսզի նրանք զերծ մնան երրայեցիների և ուրիշ ազգերի հալածանքներից, բացի սրանից մենք թույլ ենք տալիս, որ հայերն ունենան իրենց գինե-

¹⁵ О. С. Комнан, *нзл. աշխ.*, էջ 63.

¹⁶ S. Barącz, *Rys dziejów...*, էջ 89—90.

տները աղատ և առանց հարկի, որ ոչ մի պարտավորեցուցիչ գործ քաղաքում չունենան և այլն և այլն»¹⁷:

Ինչպես տեսնում ենք, հայերին Յաղլովեցում լայն իրավունքներ էին տրվում. նրանք ղեկավարվելու էին իրենց օրենքներով՝ ձիշտ այնպես, ինչպես Կամենեց-Պոդոլսկում: Դա նշանակում էր, որ քաղաքի ներսում նրանք ունենալու էին իրենց ինքնավարությունը՝ ընտրովի վոյթով, դատավորներով, «Քառասուն եղբայրների» խորհրդով և այլն:

Հետագայում, երբ Յաղլովեցն արդեն Կոնեցպոլսկիների սևփականությունն էր, հայերը դիմում են նրանց՝ իրենց իրավունքները հաստատելու խնդրանքով: Կրակովյան կաշտելյան Ստանիսլավ Կոնեցպոլսկին հարգում է հայերի խնդրանքը: Նրա արտոնագրից երևում է, որ հայերի իրավունքները վերահաստատվել են Յաղլովեցկի մի քանի իշխանավորների կողմից: Ծն. Կոնեցպոլսկին գրում է, որ ինքր, նկատի ունենալով Յաղլովեցի հայ վոյթի, տարեց քաղաքացիների և ողջ հայ համայնքի խնդրանքը, հաստատում է նրանց իրավունքները, արտոնություններն ու ազատությունները՝ այն հաշվով, որ հայերն իրենց շինարարությունամբ, սևփական տնտեսությունների բարգավաճմամբ կշարունակեն դարգացնել քաղաքը և բացի այդ, կհրավիրեն իրենց մոտ նաև իրենց աղգականներին ու ծանոթներին: Արտոնագիրը տրված է 1643 թ. դեկտեմբերի 25-ին Բար քաղաքում¹⁸:

Հայերի հոսանքը դեպի Յաղլովեց շարունակվել է երկար տարիներ: Այդ քաղաքն էին դալիս ինչպես Ղրիմից ու Մուղավիայից, այնպես էլ Փոքր Ասիայի հայաշատ կենտրոններից և բուն Հայաստանից գաղթած հայեր:

Հայկական թաղամասը գտնվում էր Յաղլովեցի կենտրոնական մասում: Բացառապես հայերով բնակեցված երկու փողոցները հատվում էին քաղաքի կենտրոնում: Այդտեղ մի փոքրիկ բարձրություն վրա գտնվում էր հայկական Ս. Աստվածածին եկեղեցին: Ճեկեղեցին Հայոց, — գրում է Բժշկյանը, — մեծագործ է և գեղեցիկ՝ կառուցեալ ի վերայ վայելչագիր բլրոյ քարաշէն յանուն Աստուածածնի. առ որով անցանէ ջուր»¹⁹:

Միսիոներ Ա. Մ. Պիդուն գրում է, որ այդ եկեղեցուց բացի հայերը Յաղլովեցում ունեին մի մատուռ և վանք, որը գտնվում էր քաղաքից դուրս. «Ի միջավայրի քաղաքին է եկեղեցի մի, և վանք մի արտաքոյ քաղաքին, թափուր ի միաբանից, և մատուռն մի»²⁰: Այդ վանքը կոչվել է Ս. Գրիգոր Լուսավորչի, իսկ մատուռը՝ Ավետման անունով: 1657 թ. հայերը նորոգում են վանքը. մատուռը նորոգվում է Յաղլովեցի հայերի վոյթ Բոգդան Սպենգովսկու միջոցներով²¹:

Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման ժամանակը, ինչպես նշեցինք, հայտնի է, որովհետև պահպանվել է շինարարական արձանագրությունը: Դեռևս անցյալ դարի վերջերին Լվովի համալսարանի ղեղարվեստի պատմության պրոֆեսոր Պոդոս (Բոլոդ) Անտոնևիչը Ավստրո-Հունգարական կայսրության աղգերի

¹⁷ Ս ա հ կ Թ ա ն դ յ ա ն, Լեհահայերի մասին, «Արարատ», էջ.Իրածին, 1902, մարտ-ապրիլ, էջ 285:

¹⁸ S. Barącz, Rys dziejów, էջ 90:

¹⁹ Մ. Բ ժ շ կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 129—130:

²⁰ «Բունի միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հոովմայ, ժամանակակից յիշատակարանք», Ս. Պետերբուրգ, 1884, էջ 14:

²¹ «Ստեփանոսի Ռոշրայ ժամանակագրութիւն կամ տարեկանք եկեղեցականք», հրատարակեց Դ. Համադասայ Ոսկեան, Վիեննա, 1964, էջ 170:

պատմութեան հատորներից մեկի համար, ուր դետեղվելու էր նաև լեհահայոց պատմությունը, նյութեր էր հավաքում լեհահայ գաղութներում: Նա լինում է նաև Յաղութեցում և պատճենահանում եկեղեցու վրա եղած արձանագրությունները: Հետագայում Անտոնեիշը դրանք հանձնում է հայագետ Ֆրիդրիխ Մյուլլերին: Վերջինս 1896 թ. արձանագրություններից մեկը հրատարակում է Վիեննայում²²: Ավստրիայի կայսերական ակադեմիան արձանագրությունների պատճենները հանձնում է «Հանգես ամսօրյայի» խմբագրությանը, որը Գրիգոր Գովրիկյանի աշխատասիրությամբ հրապարակում է դրանք իր ամսագրի 1897 թ. համարներից մեկում²³: Հարկ է նշել, որ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ եկեղեցու մոտ պայթած արկի բեկորներից վնասվել է նաև շենքի կենտրոնական մուտքի վերին մասում, քանդակազարդ գեղեցիկ շրջանակի մեջ գտնվող արձանագրությունը: Նրա վերծանությունն այժմ անկարելի է առանց Մյուլլերի ու հատկապես Գովրիկյանի հրատարակության: Ըստ այդ արձանագրության եկեղեցին կառուցվել է 1551 թ. («կատարեցաւ Ռ թվին»): Հիշատակված է նաև արձանագրության գծագրողի անունը՝ («Յ/ոյվ/հանն/էս երէց գծող սորին»)²⁴:

Լվովի հայերը իրենց մայր եկեղեցու շինարարությունը հանձնարարել էին իտալացի ճարտարապետ Դորիսին, որը ծագում էր Ղրիմի ջենովական գաղթականներից: Յաղութեցում ևս հայ եկեղեցու շինարարության համար հրավիրվում է իտալացի ճարտարապետ: Հայտնի է նրա լեհական ձև ստացած անունը՝ Պիոտր Կրասովսկի²⁵: Լեհ արվեստագետ Տադեուշ Մանկովսկին, որը երկար տարիներ ղեկավար է լեհահայոց արվեստի հարցերով, ահա թե ինչ է գրում Յաղութեցի հայկական եկեղեցու մասին. «Այդ եկեղեցու ոճը շատ բան է կորցրել հայկական գծերից, ընդունելով իտալական վերածննդի գծեր: Նրանում զգացվում են որոշ մանրամասնություններ նաև ուշ ժամանակի արևմտյան գոթական ոճի: Յաղութեցի հայ եկեղեցու ոճի մեջ այլ մանրամասնություններ, ինչպես երկրորդ հարկի բարձր լուսամուտների երիզները, ավելի շուտ հիշեցնում են իսլամական երկրների ճարտարապետական ոճը: Ընդհանրապես այդ հայ եկեղեցու ճարտարապետությունը, ոճի տեսակետից, Արևմուտքի և Արևելքի ոճային ձևերի խառնուրդ է, արտացոլելով իր մեջ հին լեհաստանի հարավ-արևելյան սահմաններում բնավող երկու տարբեր մշակույթների գործոնները»²⁶:

Եկեղեցին մի քանի անգամ վերականգնվել է: Շենքի վերնածակատի վերևում կլոր շրջանակի մեջ նշված թվականը վերաբերում է վերջին նորոգմանը, որ իրականացրել են կաթոլիկություն ընդունած ուկրաինացիները 1932 թ.:

Եկեղեցու մոտ պահպանվել է նրա ղանգակատունը: Հենվելով ումինացի նշանավոր հայագետ Ն. Յորգայի և Տ. Մանկովսկու ուսումնասիրությունների վրա, Զ. Օբերտինսկին գրում է, որ «եկեղեցու վրան կառուցումը ավարտել են հետո բարձրացած է անոր աշտարակը, որ նմանություն ունի Մոլդավիայի մեջ


²² Dr. Friedrich Müller, Zwei armenische Inschriften aus Galizien und die Gründungs-Urkunde der armenischen Kirche in Kamenec Podolsk, Sitzungsberichte der philosophisch-historischen glasse Akademie der Wissenschaften, CXXXV, Bd. II, Abh., Wien, 1895, էջ 1—8.

²³ Հ. Գ. Գ., լեհահայոց բանի մը հայ արձանագրությունները, «Հանգես ամսօրյա», 1897, հունվար, էջ 19—21:

²⁴ Նույն տեղում, էջ 19—20:

²⁵ Տադեուշ Մանկովսկի, Արևելքը լեհական գեղարվեստական մշակույթի մեջ, «Էջմիածին», 1960, հունիս, էջ 22:

²⁶ Նույն տեղում, էջ 22—23:



Յաղուվեցի հայկական եկեղեցու ճակատամասը

կերտված աշտարակներու և այս՝ խորհել կուտա թե անոր ճարտարապետը այդ կողմերեն ըլլա և այն ժամանակներուն կանգնված՝ երբ Մուղավիայեն դադիւն-լու եռուղեռ կար»²⁷։

Ինչպէս Կամենիցում, այնպէս էլ այստեղ հայերը մասնակցել են քաղաքի շուրջը պաշտպանական ամրութիւններ ու պարիսպներ կառուցելու գործին։ «Ի ժամանակին յայնմիկ, — գրում է Բժշկյանը, — նախապատիւքն ի քաղաքին էին Հայք, որք և շինեցին բերդ, կառուցին յոլով շինուածս հրաշակերտս»²⁸։ Յաղու-վեցի ամրոցում, որի հսկա պարիսպներն ու շինութիւններն մի ղդալի մասը

27 Ձ. Օրերտիւսկի, նշվ. աշխ., էջ 470։

28 Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 129։

պահպանվել են մինչև այսօր, կարելի է տեսնել քանդակազարդ մի մուտք, որն առաջին իսկ հայացքից մատնում է իր հայկական ծագումը: Հայ քարգործ վարպետները այդ մուտքի շրջանակը, հատկապես նրա վերին մասերն ու ներսը, բացառիկ խնամքով ու մեծ ճաշակով զարդարել են գեղեցիկ նախշերով: Այդ մուտքի նկարը զետեղված է Անտոնևիչի ուսումնասիրության մեջ²⁹:

Հայկական գերեզմանատունը գտնվելիս է եղել դեպի Բուլաշ տանող դարպասի մոտ, մի բլրակի վրա: 1860 թ., երբ կառուցվել է Բուլաշի ճանապարհը, այնտեղից հայտնաբերվել են մեծ քանակությամբ մարդկային ոսկորներ³⁰:

Մ. Բժշկյանի «Ճանապարհորդութիւնից» տեղեկանում ենք, որ Յազլովեցի հայերը կառուցել են մի «աղբիւրս՝ հայ արձանագրութեամբ»: Անտոնևիչը, որ հրատարակել է այդ աղբյուրի և նրա արձանագրության նկարը, գրում է, թե այն կառուցել են 1613 թ. պարոն Հակոբն ու նրա եղբայր Ստեփանը, փորագրությունները կատարել է քարգործ վարպետ Աբրահամը: Աղբյուրը զարդարող հուշարձանի վերին մասում երևում է թևավոր հրեշտակի գլուխ, ներքևում արձանագրությունն է՝ սկզբում լատիներեն, հետո՝ հայերեն: Ըստ Պ. Անտոնևիչի, աղբյուրի քանդակները ներկայացնում են բարոկկոյի ու հայկական զարդանախշերի խառնուրդ³¹:

Աղբյուրը և նրա արձանագրությունը, ինչպես անձամբ համոզվեցինք, շատ լավ վիճակում պահպանվել են մինչև այսօր: Յազլովեցիները աղբյուրը վերցրել են ծածկի տակ և նրա ջուրը խողովակներով հասցրել գյուղի ճաշարանն ու հացի փոքրիկ գործարանը:

Աղբյուրի կառուցումից մի քանի տասնամյակ հետո յազլովեցահայերը քաղաքից բավական վերև, այնտեղ, ուր ճանապարհը Բուլաշի բարձրավանդակից թեքվում է դեպի ձորը, կառուցում են «Հայկական դարպասը»: Քաղաքի պաշտպանական համակարգի մեջ մտնող այդ հատվածը ևս պաշտպանել են հայ զինվորները: «Հայկական դարպասի» կառուցումը սկսել էր յազլովեցի հայ նշանավոր վաճառական Մինաս Սիրինովիչը: 1672 թ. մարտի 15-ին գրված նրա կտակից տեղեկանում ենք, որ «Դարպասի» ավարտելը նա հանձնարարել է իր որդիներին³²: «Հայկական դարպասը» քանդվել է 1800 թ.:

Քանդակազարդ մուտքերը շատ տարածված են եղել յազլովեցահայերի մոտ. նույնիսկ բնակարանների դռների ու պատուհանների շրջանակները զարդանախշված են եղել: Ի տարբերություն Լվովի, որտեղ քաղաքային իշխանությունները արգելք էին հանդիսանում ծավալով մեծ շենքեր կառուցելուն, այստեղ այդ արգելքը գոյություն չի ունեցել և քաղաքի բնակիչները, այդ թվում և հայերը, կառուցել են ընդարձակ տներ և մեծ ճաշակով ձևավորել բակերը: Պ. Անտոնևիչը զարմանքով գրում է, որ նույնիսկ աղքատ մարդկանցից ոմանք ունեցել են մեծ սենյակներ, որոնց տակ եղել են թաղածածկ մառաններ: Մուտքերը զարդարված են եղել նուրբ նախշերով³³:

Յազլովեցի հայ գաղութը, ինչպես տեսանք, արտոնություն էր ստացել տնօրինելու իր գործերը: Այդ ներքին ինքնավարությունն իրականացնում էին

²⁹ Boloż Antoniewicz, Die Armenier, „Die Österreichisch-Ungarische Monarchie in Wort und Bild“, Wien, 1898, էջ 457:

³⁰ S. Barącz, Pamiętki Jazłowieckie, էջ 128:

³¹ B. Antoniewicz, նույն տեղում:

³² S. Barącz, Żywoty sławnich ormian w Polsce, Lwów, 1856, էջ 302:

³³ B. Antoniewicz, նշվ. աշխ., էջ 458:

վոյթն ու «Քառասուն եղբայրների» խորհուրդը: Յազլովեցի «Կտրիճվորաց եղբայրության» կանոնադրությունից երևում է, որ կանոնադրության կազմման ժամանակ՝ 1646 թ., Յազլովեցում գործել են հայկական հոգևոր և աշխարհիկ դատարաններ: Կանոնադրության ներածական մասում հիշատակվում են «Հոգևոր դատաստանի» ատենադպիր տեր Հակոբը և «մարմնաւոր դատաստանի» դատավոր պարոն Սեֆերի որդի պան Աստվածատուր մահտեսին՝ Յազլովեցի հայերի վոյթը: Թվարկված են նաև «Քառասուն եղբայրների» խորհրդի մի քանի անդամներ՝ պան Օհանը, պան Ասվատուրը, պան Հակոբը և պան Մարկոսը: Սրանցից ոմանք վարչական պաշտոն են վարել խորհրդում՝ պան Հակոբը եղել է «մարշալեք», իսկ պան Մարկոսը՝ «վոյվոդա»: Հիշատակված են նաև երեցփոխան պարոն Նիկողայոսը, աղա պան Բաղդասարը՝ «ի աղայութեան բան Պաղտասարին»³⁴:

Երևում է, որ հայ համայնքի վարչական մարմինները ճիշտ այնպիսին էին, ինչպես լեհահայ մյուս գաղութների նույնատիպ հիմնարկությունները: Կային, ուրեմն, և՛ վոյթ, և՛ երեցփոխան, գործում էին հոգևոր ու աշխարհիկ դատարաններ: Պարտականությունների հստակ բաժանում կար. «Վոյթն ընդհանուր օրինաց կամ արդարության պաշտոնյա է,— գրում է Ք. Քուշներյանը,— իսկ ազգային շահույց, եկեղեցյաց և դպրոցաց վերակացու և պաշտպան երեցփոխանն է»³⁵: «Քառասուն եղբայրների» խորհուրդը, որ ընտրվում էր քաղաքի աչքի ընկնող և անպայման պատշաճ դիրքի և ունեցվածքի տեր մարդկանցից, ղեկավարվում էր մարշալի կողմից և իրավունք ուներ վերահսկելու վոյթի ու դատավորների գործունեությունը: Բայց ամենակարևոր դեմքը վոյթն էր, որն ուղղակի կախում ուներ լեհական թագավորից:

Յազլովեցի հայոց դատարանը ևս ունեցել է լսված գործերի գրանցման մատյաններ, որոնցից. դժբախտաբար, միայն պատահականներ են հասել մեզ և այն էլ ուշ ժամանակների՝ 1669—1670, 1672 թթ., երբ հայոց լեզուն դատարանում արդեն զիջել էր իր տեղը լեհերենին (ոչ ամբողջովին, որովհետև պատահում են երբեմն հայերեն որոշ գրառումներ): Ընդամենը 43 թերթ կազմող ոչ այնքան բավարար վիճակում պահպանված այդ արձանագրությունները հայտնաբերել է Ս. Բարոնշը և հրատարակել նրանցից առավել հետաքրքրականները³⁶: Ուկր. ՍՍՀ ԳԱ Լվովի գրադարանի ձեռագրային բաժնում պահվող այդ փաստաթղթերը որոշ պատկերացում են տալիս Յազլովեցի հայ դատարանի գործունեության վերաբերյալ:

Վոյթի պաշտոնը ընտրովի էր, ընտրում էին «Քառասուն եղբայրները» և ժողովրդի միջից առանձնացված ներկայացուցիչները: Թե՛ «եղբայրները», և թե՛ այս ընտրյալները գաղութի ունևոր խավերից էին և, բնականաբար, վարչական մարմնի ներսում պաշտպանում էին իրենց դասակարգի շահերը:

Յազլովեցի հայ վոյթերի մեջ ամենանշանավորը Բոգդան Շեֆերովիչն էր, որը Հայաստանից Պոդոլյե էր գաղթել 1648 թ.: Ս. Բարոնշը գրում է, որ նա իշխանական ընտանիքից էր և իրեն պատրաստել էր ասպետական գործերի համար: Հաստատվելով Յազլովեցում, Շեֆերովիչն իր ողջ եռանդն ու

³⁴ Վիեննայի Մխիթարյանների մատենադարան, ձեռ. № 453, էջ 2—3:

³⁵ Ք եր ո վ ր և Ք ու շ ն Եր յ ա ն, Ուխտագնացութիւն առ Տիրամայրն հայոց ի Կամենից Փոտոկան, «Բաղմավէպ», 1883, էջ 105:

³⁶ S. Barącz, Pamiątki..., էջ 110—111:

ընդունակությունները ծառայեցնում է քաղաքի պաշտպանության գործին: Իր միջոցներով նա ստեղծում է զորախումբ, որին վստահվում է քաղաքի պաշտպանությունը: Ս. Բարոնշը գրում է, որ Շեֆերովիչը կարողանում էր փոքրաթիվ ուժերով հաղթանակի հասնել թվով գերակշռող հակառակորդների նկատմամբ: Շեֆերովիչի հուշակն այնպես էր տարածվել լեհաստանում, որ Յան Արքեպի թագավորը 1676 թ. հունվարի 5-ին արքայական սեյմում նրան հուշակում է ասպետ: Բարոնշի գրքում բերված է թագավորական հրամանագրի լատիներեն ամբողջական բնագիրը: Շեֆերովիչին շնորհում են նաև Սպենդովսկի ադմիրալական ազգանունը³⁷:

Յազլուվեցը ոչ միայն անառիկ ամրոց էր, այլև առևտրա-արհեստավորական խոշոր կենտրոն³⁸: Արհեստների դարգացմանը շատ նպաստավոր է եղել իշխան Յան Եժի Ռադզիվիլի հրամանագիրը, որի համաձայն արհեստավորները ապաստվում էին բոլոր կարգի հարկերից ու պարտավորություններից: Դա չէր կարող բարերար ազդեցություն չունենալ նաև հայ արհեստավորների համար, որոնք վաղուց ի վեր հաստատվել էին Յազլուվեցում: Դժբախտաբար, սկզբնաղբյուրները շատ բան չեն հաղորդում հայ արհեստավորների մասին: Հայտնի է, որ ի սկզբանե հայերը Յազլուվեցում զբաղվում էին մեծ քանակությամբ անասուններ բտելու և վաճառելու գործով: Հայ կաշեգործները համախմբված են եղել իրենց համքարության մեջ, որը կանոնավորում էր կաշվի մշակման հետ կապված գործերը:

Յազլուվեցի վրայով անցնող Կ. Պոլսից լվով տանող ճանապարհը այդ քաղաքը դարձրել էր կարևոր մի օղակ արևելա-եվրոպական առևտրի երկարածիգ շղթայում: Ակտիվորեն մասնակցելով այդ առևտրին և Յազլուվեցում ստեղծելով իրենց ընդարձակ պահեստները, հայերը տնտեսական գործարքների մեջ էին մտնում նաև հեռու և մոտ քաղաքների վաճառականների հետ: Յազլուվեցյան հայ դատարանի նիստերի արձանագրություններից երևում է, որ յազլուվեցահայերը կապեր ունեին Կաֆայի, Սերաթի, Պոդհայցիի, Հորոդենկայի, Լվովի ու Կամենեց-Պոդոլսկի առևտրականների հետ: Սակայն իրենց ապրանքները վաճառելու համար յազլուվեցահայերը հեռու գնալու կարիք չունեին, որովհետև ամեն տարի փետրվար ամսին այդ քաղաքում կազմակերպվում էր մեծ տոնավաճառ, որին մասնակցելու էին գալիս բազմաթիվ վաճառականներ ոչ միայն լեհաստանից, այլև Թուրքիայից, Մոլդավիայից, Ղրիմից ու այլ վայրերից: Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրություններից (XVI դ.) երևում է, որ այդ քաղաքի հայ վաճառականները գործունե մասնակցություն են ունեցել յազլուվեցյան տոնավաճառներին: Դատական վճիռների մեջ հաճախ հիշատակվում է Յազլուվեցի տոնավաճառը, որի ժամանակ, սովորաբար, պարտապան վաճառականները հնարավորություն են ունեցել մարելու իրենց պարտքերը: Եվ այդպես էլ գրանցվում էր դատական մատյանի մեջ՝ պարտքը փակել Յազլուվեցի առաջիկա տոնավաճառի ժամանակ³⁹:

³⁷ S. Barącz, Żywoty..., էջ 303—310.

³⁸ О. С. Комнан, նշվ. աշխ., էջ 170.

³⁹ Վ. Ռ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (16-րդ դ.), 1963, Երևան, էջ 130, 232, 250, 266, 316:

Այդ տոնավաճառներին ակտիվորեն էին մասնակցում նաև լվովի հայ վաճառականները: Նրանցից ոմանք մեծարժեք գնումներ էին կատարում այնտեղ և վաճառելու համար դնածները տանում այլ վայրեր⁴⁰: XVII դ. Յազլովեցի տոնավաճառներին մասնակցում էին նաև Բրոդիի⁴¹ և Սուշավայի⁴² հայ վաճառականները:

Առևտրական գործերում առանձնապես հաջողակ յազլովեցահայերը մեծ գումարներ էին կուտակում և իրենց շուայլ նիստ ու կացով ոչնչով չէին տարբերվում լվովի կամ Կամենիցի մեծահարուստներից: Ա. Պիդուն վկայում է, որ «այս տեղի Հայք, ուրիշ քաղաքներեն ավելի հարուստ և պատվավոր են»⁴³:

Տեղեկություններ են պահպանվել յազլովցի մի քանի հայերի մասին, որոնք զգալի դեր են խաղացել գաղութի կյանքում: Դրանցից հարկ է հիշել Մինաս Սիրինովիչին, որն իր միջոցներով կառուցել է քաղաքի «Հայկական դարպասը» և Յազլովեցի բարեկարգման, իսկ վտանգի դեպքում պաշտպանության համար կտակով հատկացրել 300 զլոտի: Ուշագրավ է, որ 1672 թ. մարտի 15-ի այդ կտակով նա էջմիածնի և Երուսաղեմի վանքերին է հատկացրել 50-ական թալեր գումար: Նա գումարներ է թողել նաև Յազլովեցի հայկական, լեհական և ուկրաինական եկեղեցիներին⁴⁴: Իսկ յազլովցի մեկ այլ հայ՝ Շահին Կիրկորովիչը 1671 թ. մայիսի 20-ի կտակով քաղաքին է թողել իր սեփական բաղնիքը⁴⁵:

Յազլովեցի նշանավոր հայերից էր նաև Ասվատուր Մինասովիչը, որը հետազայում տեղափոխվում է լվով: Այնտեղ նա, գլխավորելով հայ համայնքը, մեծ հարգանք ու վստահություն է ձեռք բերում նաև լեհերի մոտ: Նա հռչակվում է իր բարեգործություններով: Մահացել է 1678 թ.⁴⁶:

Յազլովեցի հայերի հասարակական կյանքում որոշակի դեր էին խաղում եղբայրությունները: Այդ քաղաքի հայ երիտասարդաց միության՝ «Կտրիճվորաց եղբայրության» կանոնադրությունը (հաստատված 1658 թ.) հնարավորություն է ընձեռում պատկերացում կազմելու նրա կառուցվածքի ու հետապնդած նպատակների մասին: Հարկ է նշել, որ լեհահայ և մոլդավահայ գաղութներից մնացած կանոնադրությունները ընդհանուր շատ բան ունեն ինչպես միմյանց, այնպես էլ դեռևս 1280 թ. Երզնկայում կազմակերպված «Սղբայրության» հետ: Յազլովեցահայ երիտասարդական կազմակերպությունը կապ չուներ առևտրի կամ արհեստների որևէ ճյուղի հետ, նրա նպատակն էր փոխադարձ օգնության և օժանդակության հիման վրա համախմբել հայ երիտասարդներին հայկական եկեղեցու շուրջը, միաժամանակ և նպաստել

⁴⁰ Е. М. Подградская, Об армянских поселениях в Молдавии и их роли в развитии торговых связей страны с западноукраинскими землями (XVI—XVII вв.), «Исторические связи и дружба украинского и армянского народов», вып. III, Ереван, 1971, էջ 215.

⁴¹ Я. С. Мельничук, Армянское поселение в Бродах, «Ист. связи и дружба укр. и арм. народов», вып. III, էջ 253.

⁴² Е. М. Подградская, նշվ. աշխ., էջ 215—216.

⁴³ Ա. Պավինսկի, Պատմություն միության լեհաստանի Հայոց ընդ Հռովմեական եկեղեցվո, «Բաղմավեպ», 1890, էջ 108.

⁴⁴ S. Baracz, Żywoty..., էջ 202.

⁴⁵ S. Baracz, Rys dziejów..., էջ 90—91.

⁴⁶ S. Baracz, Żywoty..., էջ 203.

նրանց դաստիարակությանը, մարզել և պահանջի դեպքում մասնակից դարձնել հայրենի քաղաքի պաշտպանության գործին:

Հայտնի է, որ Յազլովեցի հայերը մշտապես մեծ մասնակցություն են ունեցել քաղաքի պաշտպանությանը: 1685 թ. հունիսի 6-ին լեհ թագավոր Յան Սոբեսկին դրել է. «Պետք է, որ մենք հիշենք հայ աղգին պատկանող մարդկանց կտրիճությունն ու քաջագործությունը, որ նրանք ցույց են տվել այնքան դարեր տևող մեր համակեցության ընթացքում Կամենիցի, Յազլովեցի և Լվովի, ինչպես և մյուս սահմանային բերդերի պաշտպանության գործում»⁴⁷: Յազլովեցի երիտասարդները միշտ էլ այդ պայքարի առաջին դժերում են եղել և հավանորեն «Կտրիճվորաց եղբայրությունը» նպաստել է դրան:

Յազլովեցում գոյություն ունեցած կրթական օջախների վերաբերյալ մեր տեղեկությունները բավական սահմանափակ են: Պետք է կարծել, որ հայաշատ այդ քաղաքում, ուր գործել են աշխարհիկ ու հոգևոր դատարաններ, քաղաքային վարչություններ և այլն, մշտապես կարիք է զգացվել գրագետ անձանց և այդ պակասը, ինչպես ամենուրեք, այնպես էլ Յազլովեցում լրացրել են հոգևոր հաստատություններում կրթություն ստացած անձինք: 1618 թ. Յազլովեցում կրկնօրինակված մագաղաթե «Սվետարանի» (պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում) գրիչ և ծաղկող Հովհաննես Եվդոկացին ձեռագրի հիշատակարանում շարադրել է հետևյալ ուշագրավ տողերը. «Եւս առաւել աղաչեմ յիշել ի տէր զուսուցիչն զՊալին Թոխաթցի զեղբայր մօր իմո, զի բազում ջանիւ և աշխատութեամբ կրթէր զիս յարհեստ գրչութեանս...»⁴⁸: Դստելով այդ ձեռագրի գեղեցիկ մանրանկարներից ու հրերից, կարելի է ասել, որ իր գործի մեջ շատ հմուտ է եղել այդ ուսուցիչը և, հավանորեն, այլ աշակերտներ էլ է ունեցել Հովհաննեսից բացի:

Յազլովեցից մեզ հասած ձեռագրերը վկայում են այն մասին, որ այդ քաղաքում ապրել ու ստեղծագործել են գրչության արվեստի մեջ վարպետացած անձինք, որոնց մի մասը գուցե և այդտեղ են գաղթել այլ վայրերից և շարունակելով զբաղվել իրենց մասնագիտությամբ, ունեցել են նաև իրենց աշակերտներն ու հետևորդները: Հնարավոր է, որ ուսանելու նպատակով Յազլովեցից հայ պատանիներ են ուղարկվել Կամենեց-Պոդոլսկ, որտեղ XVI դարի վերջերից գործում էր հայկական դպրոցը: Երբ 1664 թ. Լվովում բացվում է պապական դպրանոցը, յազլովցի շատ ծնողներ իրենց զավակներին ուղարկում են այնտեղ: Այդ դպրոցի աշակերտների մեծամասնությունը գնացած են եղել Պոդոլյեից, ուստի և այդ հանգամանքը դժգոհության առիթ է տվել Լվովի հայերին: «Այլ Հայքն Իլվովայ, — գրում է Պիդուն, — տրտնջել ուրեմն կալան, թէ ահա դպրանոցն ողջոյն լի է աշակերտօք ի Կամենեցէ և յԵազլովեցէ, իսկ զպատանիս յԻլվովայ իբր թէ ոչ ընդունիցիմք»⁴⁹:

Երբ 1668 թ. Լվովի հայկական դպրոցի բարձր դասարանի աշակերտների ուժերով բեմադրվում է «Մարտիրոսութիւն սրբոյն Հռիփսիմեայ» չափածո ողբերգությունը (հեղինակ՝ Ա. Պիդուն) և այլ պիեսներ («Մահ Կեսարու», «Առեղծուածք Սողոմոնի», «Մահ Հերովդեայ» և այլն), Յազլովեցի հայ պատա-

⁴⁷ Հ. Զավրյան, Լեհահայոց գաղթը և ներքին կյանքը, «Հայրենիք», թիվ 12 (84), 1929, հոկտ., էջ 140:

⁴⁸ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 9655, էջ 150ա:

⁴⁹ «Բոնի միություն...», էջ 131:

նինները ևս բերում են իրենց եռանդուն մասնակցությունը: «Մարտիրոսութիւն սրբոյն Հովհաննէայ» թատերգության գործող անձանց ցուցակից երևում է, որ ներկայացմանը հանդես են եկել նաև յազլովեցահայ վեց աշակերտներ⁵⁰:

Այդ դպրոցի շրջանավարտներից Աստվածատուր Ներսեսովիչը (1645—1709 թթ.) 1665 թ. քահանա է ձեռնադրվում և կաթողիկոսություն ընդունելուց հետո քարոզչի պաշտոն ստանձնում Յազլովեցի հայկական եկեղեցում: Միաժամանակ նա գլխավորում է այնտեղի հայկական դպրոցը: «Վասն նորա,— գրում է Պիդուն,— մտին ի դպրոցն, որ հիմնեալ էր անդ յառաջագոյն, մանկունք աւելի քան զվաթսուն, զորս մարզէ յուսմունս և ի բարեպաշտութեան»⁵¹: Բացի այդ, Ներսեսովիչը հիմնադրում է եղբայրություններ ու ընկերություններ⁵²:

Այդ դպրոցում դասավանդվել է հայոց լեզու, լատիներեն և կրոն⁵³: Ծիզվիտ հոգևորականների ձեռքի տակ կրթություն ստացած Ա. Ներսեսովիչը լեհահայոց եկեղեցին Հռոմին ենթարկելու կողմնակիցներից էր և պետք է կարծել, որ այդ ոգով էլ նա դաստիարակել է իր աշակերտներին: Նրա եռանդուն ջանքերն ու փութաջանությունը գնահատվել են կաթողիկ եկեղեցու հայրերի կողմից: «Առ ի քաջալերել զնա վասն փութաջանութեանն,— գրում է Պիդուն,— զի յարատևիսցէ յընթացս իւր՝ առաքեաց նմա Ս. Ժողովն պարգև 10 մաճառ ոսկուր»⁵⁴:

Դպրոցը գոյություն է ունեցել մինչև թուրքերի կողմից Յազլովեցի գրավումը (1676 թ.): Այդ ժամանակ ի թիվս այլ հայերի Յազլովեցից հեռացել է նաև Ա. Ներսեսովիչը:

Յազլովեցում եղած հայերեն ձեռագրերից շատ քիչ բան է մեզ հասել: Եղածների մեջ հնագույնը 1610 թ. «Պատարագատետրն» է, որը գրվել է Կամենեց-Պոդոլսկ քաղաքում Աստվածատուր դպիրի կողմից՝ «ի վայելումն նորընծայ տէր Ղազարին, և յիշատակ Եազլովիցու Հաճկատար Ս. Աստուածածնին»⁵⁵:

Յուրահատուկ ձևով է հասել Յազլովեց 1639 թ. «Օրինագիրքը»։ Նրա հիշատակարանում կարդում ենք հետևյալը. «Դարձեալ ի անկումն գրգիս ի քաղաքն Յեազլովիցայ. ի երկիրն Լեհաց որ անկաւ ի ձեռս այլ ազգաց ի թուականիս ՌՃԼ-ին (1681)»։ Այժմ այն պահվում է Զմմառի վանքի մատենադարանում⁵⁶:

Յազլովեցի Աստվածածնի եկեղեցում եղել են նաև մի «Ճաշոց», որ հետո տեղափոխվել էր Սնյատին, և մի «Սաղմոսարան»։ Վերջինիս հիշատակարանից սլարդվում է, որ գրվել է Յազլովեցում 1645 թ.⁵⁷:

⁵⁰ «Անդրանիկ հայ ողբերգութեանց, Մարտիրոսութիւն սրբոյն Հովհաննէայ», «Բաղմավէպ», 1884, էջ 329: Հարկ է նշել, որ «Ողբերգության» օրինակողը սխալմամբ «յազլովցի»-ի փոխարէն գրել է «լասլովացի» և այդ սխալը չի նկատել հրատարակողը (նույն տեղում):

⁵¹ «Բռնի միութիւն...», էջ 127—128:

⁵² Նույն տեղում, էջ 128:

⁵³ „Encyklopedia kościelna“, tom XVII, Warszawa, 1891, էջ 443:

⁵⁴ «Բռնի միութիւն...», էջ 128:

⁵⁵ Ա լ ի շ ա ն, Կամենից, Վենետիկ, 1896, էջ 170:

⁵⁶ Մ և ս ր ո պ վ ր դ. Ք և շ ի շ յ ա ն, Ցուցակ հայերեն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանի, Վիեննա, 1964, էջ 433:

⁵⁷ Մ. Բ ժ շ կ յ ա ն, Նշվ. աշխ., էջ 130:

1652 թ. Յազլուվեցում Միքայելի որդի Մուրատը խոջա Թումանի պատվերով արտագրել է մի «Ավետարան», որը վերջինս նվիրել է Սերաֆ քաղաքի Ս. Աստվածածին եկեղեցուն⁵⁸։ Այժմ այն գտնվում է Լվովի պատմության թանգարանում։ Հետագայում Մուրատ սարկավագը տեղափոխվել է Սերաֆ և շալունակել ձեռագրեր կրկնօրինակելու աշխատանքը⁵⁹։

Յազլուվեցում մի որոշ ժամանակ գործել է Լվովցի Անտոն եպիսկոպոսը։ Նա այնտեղ 1655 թ. հուլիսի 13-ին սկսել է արտագրել մի «Ճաշոց», բայց ասվարտել է Սերաֆում նույն թվականի օգոստոսի 11-ին⁶⁰։ Յազլուվեցում է դործել նաև Արիստակես (Առեսդագէս) երեցը, որը հետագայում տեղափոխվել է Բուլղարիայի Սիլիստրա քաղաքը⁶¹։

Ինչպես տեսնում ենք, շատ բան չի պահպանվել Յազլուվեցում ստեղծված հայերեն գրքերից, բայց եղածն էլ բավական է համոզվելու համար, որ այդ քաղաքը հայ գրչության փոքրիկ օջախներից է եղել և տեղի հայությունը խրախուսել է հայ գրչի մշակներին։

Տեղեկություն կա այն մասին, որ այդ քաղաքում տարածվել են Ոսկան Երևանցու տպարանում լույս ընծայված գրքերը, որոնց վաճառքը արգելվել էր Լվովում։ Այդ գրքերի թվում է եղել նաև Առաքել Դավրիժեցու «Պատմութիւնը»⁶²։

Ս. Դ. Ագոնցն իր «Աշխարհագրութեան» մեջ հրապարակել է 1645 թ. Յազլուվեցում գրված «Սաղմոսարանի» հիշատակարանը, որտեղ Անդրեաս արքեպիսկոպոսը հիշատակված է որպես Յազլուվեցի առաջնորդ⁶³։ Կարելի է, ուրեմն, կարծել, որ Յազլուվեցի հայ գաղութում ստեղծվել էր ու գոյություն ունեւածին եպիսկոպոսական աթոռ։ Այս հարցին դրական պատասխան է տվել լեհահայ արքեպիսկոպոս Ավգ. Վարդերեսովիչը (1820—1831 թթ.)՝ հենվելով իր նախորդի՝ Հ. Սիմոնովիչի (1799—1816 թթ.) վրա։ Վերջինս գրել է, որ հայերը եպիսկոպոսական աթոռ են ունեցել Կամենիցում, Լուցկում և Յազլուվեցում⁶⁴։

Ուսումնասիրելով այս կարգի նյութերը, Ս. Բարոնչը եկել է այն եզրակացության, որ հայերը մնայուն եպիսկոպոսական աթոռ ունեցել են միայն Լվովում, իսկ մյուս վայրերում, այդ թվում և Յազլուվեցում, եպիսկոպոսների գտնվելը կրել է պատահական ու ժամանակավոր բնույթ. նրանք պարզապես ապրել են այդ վայրերում և ոչ թե առաջնորդական աթոռ գլխավորել⁶⁵։

Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում պահվող, 1640 թ. Սուլավայում գրված «Ավետարանի» հիշատակարանից երևում է, որ Անդրեաս արքեպիսկոպոսը սկզբում եղել է մուղավահայ թեմի առաջնորդը⁶⁶։ Անդրեասը, որպես արքեպիսկոպոս «Պուղտանաց երկրի» հիշատակվում է նաև 1643 թ.

⁵⁸ «Տուցակ հայերէն ձեռագրաց ի Լվով և ի Ստանիսլաւով. կազմեց հ. Ներսէս վ. Ակինյան», Վիեննա, 1961, էջ 35։

⁵⁹ Բարգես Աթոռակից կաթողիկոս. Տուցակ ձեռագրաց Ղալաթիո ազգային մատենադարանի հայոց, Անթիլիաս, Լիբանան, 1961, էջ 302։

⁶⁰ Ղ. Ալիշան, Կամենից, էջ 191—192։

⁶¹ Նույն տեղում, էջ 197։

⁶² «Բոնի միութիւն...», էջ 215—216։

⁶³ Ստեփաննոս Գյուլբեր Ագոնց, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հատ. Բ, Վենետիկ, 1802, էջ 149։

⁶⁴ Ձ. Օրերտինսկի, Նշվ. աշխ., «Հանդես ամսօրյա», 1962, մայիս-օգոստոս, էջ 217։

⁶⁵ S. B a r g e s, Pamiatki..., էջ 77։

⁶⁶ ձլիշան, Կամենից, էջ 188։

Յաշ քաղաքում դրված «ճաշոցի» հիշատակարանում⁶⁷ Այնուհետև, ինչպես տեսանք, նրա անունը հիշատակվում է որպես Յազլովեցի առաջնորդ։ Անդրեասը հինգ այլ եկեղեցականների հետ Մուղավիայից Յազլովեց է փոխադրվել 1643 թ.։ Տեղափոխության պատճառը, Օրերտինսկու ենթադրությամբ, եղել է Մուղավիայի հոսպոդար Վասիլի Լուպայի և հայ եպիսկոպոսի միջև եղած ինչ որ, թերևս անձնական բնույթի, անհամաձայնությունը։ Օգտվելով նիկոլ Խորոսովիչի բացակայությունից, կաթոլիկ եկեղեցու հետ միության հակառակորդները սիրով ընդունել են էջմիածնին հավատարիմ մուղավահայ այդ եպիսկոպոսին և ճանաչել նրան որպես Յազլովեցի առաջնորդ։ Երբ 1644 թ. մայիսին Խորոսովիչը վերադառնում է Հոռմից, նա իրեն այնքան էլ հաստատուն չի զգում, ուստի ստիպված է լինում հանդուրժել Անդրեաս եպիսկոպոսի ներկայությունը⁶⁸։

Յազլովեցում Անդրեաս եպիսկոպոսին հատկացնում են տուն, որը հետագայում տեղական ժողովրդի կողմից հիշվել է «աթոռանիստ», «արքեպիսկոպոսական ապարանք» անուններով⁶⁹։ 1644 թ. Զամոստյեի հայերը իրենց ծախսով հրավիրում են Անդրեաս եպիսկոպոսին՝ Զամոստյեի հայկական եկեղեցին օրհնելու։

Անդրեաս եպիսկոպոսի վերաբերյալ այլ տեղեկություններ մեզ չեն հասել։ Օրերտինսկին գտնում է, որ եթե նա Յազլովեցում մահացած լիներ, ապա տեղական որևէ ավանդություն պահպանված կլիներ նրա գերեզմանի մասին և ենթադրում է, որ Անդրեասը մեկնել է Յազլովեցից կամ էլ այդ բանը նրան ստիպել է անել ն. Խորոսովիչը⁷⁰։

Երկար տարիներ զբաղվելով լեհահայոց պատմության հարցերով, Սադոկ Բարոնչը մեծ ուշադրություն է նվիրել նաև ավանդությունների ու զանազան պրուցների հավաքման գործին. այդպիսի մի ավանդություն նա գրի է առել յազլովեցահայերի վերաբերյալ և հրապարակել իր գրքերում։

Լեհահայերի կաթոլիկացման ժամանակ ծավալված իրադարձությունների վերաբերյալ մեր ունեցած նյութերը գլխավորապես նվիրված են Լվովին ու մասամբ Կամենիցին, ուր տեղի էին ունենում հիմնական դեպքերը։ Մինչդեռ մյուս գաղութներում ևս հայ բնակչությունը պաշարել է բռնի կաթոլիկացման նախաձեռնողների ու կիրառողների դեմ։ Այդ պաշարը ամենևին էլ չէր սահմանափակվում կրոնական շրջանակներում, այն մղվում էր նաև ազգային ինքնուրույնությունը պահպանելու, հեռավոր հայրենիքի հետ կապերը չխզելու, ազգային մշակույթից չհրաժարվելու նշանաբանով։ Սակայն ուժերը անհավասար էին. ճիզվիտ կրոնափոխողների ու նրանց հայ գործընկերների ետևում կանգնած էին կաթոլիկ եկեղեցու ազդեցիկ պարագլուխներ, ինչպես և կրոնական անհանդուրժողականությամբ տառապող պետական մեծ ու փոքր գործիչներ։ Ի վերջո միության հակառակորդները ստիպված էին տեղի տալ կամ հեռանալ այլ երկրներ։

Յազլովեցում ևս կաթոլիկություն տարածողները հանդիպել են դիմադրության։ Միակ սկզբնաղբյուրն այդ ուշագրավ իրադարձությունների վերաբերյալ

⁶⁷ Նույն տեղում։

⁶⁸ Զ. Օրերտինսկի, Նշվ. աշխ., «Հանդես ամսօրյա», 1963, ապրիլ-հունիս, էջ 281։

⁶⁹ Զ. Օրերտինսկի, Նշվ. աշխ., «Հանդես ամսօրյա», 1962, սեպտեմբեր-դեկտեմբեր, էջ 470։

⁷⁰ Նույն տեղում, «Հանդես ամսօրյա», 1963, ապրիլ-հունիս, էջ 281։

կաթոլիկության մոլեռանդ պրոպագանդող Ա. Պիդուի գրառումներն են, որոնք բնականաբար կրում են միակողմանի բնույթ: Դրանցից երևում է, որ ճիզվիտ հայրերին նախ և առաջ մտահոգել է համապատասխան կադրեր պատրաստելու խնդիրը: 1666 թ. նոյեմբերի սկզբներին յազուկցի երկու երիտասարդների՝ Դավթին և Մարտիրոսին ձեռնադրում են կիսասարկավազ⁷¹: Նույն թվականի դեկտեմբերին Յազուկեց է գալիս կաթոլիկության եռանդուն տարածողներից Գրիգոր Բասլամբ (Բասլամովիչը), որը փորձում է «մուծանել զուղղութիւնսն յեկեղեցի անդր», բայց «ժողովուրդն Եազուկեցի թշնամանօք ընկալաւ զԲասլամովիչն»⁷²:

1666 թ. միության տարածողները Դավթին ու Մարտիրոսին, որոնց մինչ այդ ստիպել էին լվովում «քանի մի ամիս հայերէն լեզուի և բարոյական աստուածաբանութեան մէջ վարժին»⁷³, դարձնում են քահանա՝ Հովհաննես և Սարգիս անուններով: Սրանք ևս գալիս են Յազուկեց և փորձում են «մատուցանելով սլատարագ ըստ արարողութեանն կաթոլիկաց, որպէս հրամայեցաւ նոցա առնել. և այս եղև պատճառք վերստին զայրանալոյ ժողովրդեանն և եկեղեցականացն»⁷⁴: Այս կապակցությամբ կաթոլիկացնողների դեմ բողոքելու համար Յազուկեցի Ներսես քահանան մեկնում է լվով: Պիդուի վկայությամբ Ներսեսը Յազուկեցի հինգ քահանաների մեջ ամենատարեցն էր: «Հինգ քահանայք կան,— գրում է նա,— յորոց առաջինն, այս ինքն է, 65 ամեայ Տէր Ներսէսը, կարգուած է և հիւանդոտ, և բնաւ կրթութիւն չունի»⁷⁵: Ի թիվս յազուկցի այլ երիտասարդների, լվովի պապական դպրոցում սովորում էին նրա երկու որդիները՝ Աստվածատուրը, որը, ինչպես տեսանք, հետագայում կաթոլիկություն ընդունեց ու դարձավ Յազուկեցի դպրոցի տնօրենը, և Գրիգորը: Նիկոլ Թորոսովիչ արքեպիսկոպոսը օգնության է կանչում Աստվածատուրին և միասին կարողանում են «համոզել» տեր Ներսեսին: Վերջինս վերադառնում է Յազուկեց և 1666 թ. փետրվարի 7-ին «մատոյց պատարագ հանդիսաւոր ի մայր եկեղեցւոջ ըստ ամենայն ուղղութեանցն»⁷⁶:

էջմիածնի նվիրակը, որ գտնվում էր Վալախիայում, նամակներ է ուղարկում Յազուկեց և Պիդուի խոսքերով, «գրգռէր զժողովուրդն ընդդէմ արքեպիսկոպոսին և մեր»⁷⁷: 1666 թ. հուլիսի 31-ին Յազուկեց են գալիս Նիկոլ Թորոսովիչը, նրա փոխանորդը, Պիդուն և այլ հոգևորականներ: Համապատասխան փոփոխություններ են կատարվում եկեղեցիներում պահվող հոգևոր գրքերում:

Ա. Պիդուն գրում է, որ այդ ժամանակ Յազուկեցի հայերն արդեն ընդունել էին կաթոլիկությունը, բայց դա չէր համապատասխանում իրականությանը: Երբ 1667 թ. մարտի 28-ին Յազուկեց է ժամանում Անջելո Պելերատին, պարզվում է, որ շնայած «կարի ճշգրտութեամբ պահէին Հայք զուղղութիւնսն», բայց գաղտնի ձևով նրանք շարունակում էին հավատարիմ մնալ լուսավորչական եկեղեցուն: Տեղեկություն է ստացվում, որ Արիստակես քահանան «քանի մի նուագս մատուցեալ իցէ պատարագ ի տան իւրում առանց

71 «Բռնի միութիւն...», էջ 49:

72 Նույն տեղում, էջ 51, 175:

73 Ա. Պ ա վ ի ն ս կ ի, նշվ. աշխ., էջ 108:

74 «Բռնի միութիւն...», էջ 51:

75 Ա. Պ ա վ ի ն ս կ ի, նույն տեղում:

76 «Բռնի միութիւն...», էջ 52:

77 Նույն տեղում:

ուղղութեանցն և հաղորդեալ իցէ Ս. Խորհրդոյն արս ոմանս, որ ի վերին երեսս կաթողիկ երեւին այլ ի սրտի իւրեանց ունէին զհերձուածն և զհերետիկոսութիւն»։ Ա. Պեվերատին Արիստակես քահանային ուղարկում է լվով, բայց նա այնտեղ կարողանում է երգմամբ արդարանալ⁷⁸։ Հետագայում Արիստակեսը տեղափոխվում է Կամենեց-Պոդոլսկի⁷⁹։

Այսպիսի վիճակում էր Յազլովցի հայ գաղութը, երբ շուտով տեղի ունեցան իրադարձութիւններ, որոնք աղետաբեր եղան Պոդոլցեի հայութեան կյանքում։ 1672 թ. ամռանը 300.000 հոգուց բաղկացած թուրքական բանակը սուլթան Մահմեդ 1V-ի ղեկավարութեամբ ներխուժում է Պոդոլցե։ Օգոստոսի 16-ին կարճատև դիմադրութիւնից հետո ընկալ Պոդոլցեի կենտրոնը՝ Կամենեց-Պոդոլսկը։ Դրանից հետո այլևս մեծ դժվարութիւն չէր ներկայացնում պոդոլյան մյուս բերդաքաղաքների գրավումը։ Յազլովցի ուղղութեամբ շարժվող թուրքական զորքերը Հուսեյին փաշայի ղեկավարութեամբ պաշարում են Յազլովցը և քանդելով բերդի պարիսպները մտնում են քաղաք։ Բայց 1673 թ. Յան Կոնեցպոլսկին կարողանում է ազատագրել քաղաքը։ 1676 թ. թուրքերը Բերահիմ Շեյթան փաշայի հրամանատարութեամբ կրկին շարժվում են Յազլովցի վրա։ Այս անգամ քաղաքն ընկնում է նրանց ձեռքը ավելի երկար ժամանակով։ Յազլովցը դարձվում է Չերտկովի փաշալիքութեանը ենթակա բնակավայր։

Թուրքական տիրապետութիւնը տևում է ութ տարի։ Վիեննայի տակ թուրքական զորքերին Յան Սոբեսկու հասցրած ծանր պարտութիւնից հետո Անդրեյ Պոտոցկուն 12.000 զորքով հաջողվում է 1684 թ. ազատագրել Յազլովցն ու ողջ Չերտկովի փաշալիքութիւնը։

Թուրքերը մեծ հարված էին հասցրել Յազլովցին. երբեմնի ծաղկուն ու բարգաւաճ քաղաքը վերածվել էր խղճուկ մի ավանի։ Սովորական թաւանից և հարլուրավոր բնակիչների գերեվարումից հետո թուրքերը վերականգնել էին ամրոցի պարիսպները, կառուցել նոր ամրութիւններ, մզկիթներ, բայց այդ ամենը ի հաշիվ քաղաքի այլ շինութիւնների ավերման։

Քաղաքի գրավման ժամանակ հայերի մի մասին հաջողվում է հեռանալ։ Իրանցից ոմանք հաստատվում են Բրոդիում, մյուսները գնում են Զոլոչև, Լվով, Չամոստյե և անգամ Վարշավա։ Բրոդի գնացածները տանում են իրենց հետ Կոնեցպոլսկիներից նվեր ստացած Աստվածամոր սրբապատկերը և եկեղեցու ղարդերը⁸⁰։ Բրոդի են գալիս նաև թուրքական արշավանքի հետևանքով Կամենցիցից ու Բուչաչից հեռացած բազմաթիւ հայեր։ Այդ քաղաքը ևս Կոնեցպոլսկիների սեփականութիւնն էր և այնտեղ հաստատված հայերը վայելում էին ճիշտ այնպիսի արտոնութիւններ, ինչպես Յազլովցում⁸¹։

Փախստական հայերը Բրոդիում արժանանում են լավ ընդունելութեան։ Յազլովցից բերած սրբապատկերը և զարդերը դրվում են Բրոդիի ծխական եկեղեցում, բայց շուտով պատահական հրդեհի ժամանակ եկեղեցին այրվում է։ Սրբապատկերն ու հարստութիւնների մի մասը հաջողվում է փրկել։ 1692 թ. շքեղ հանդեսով այդ նկարը տեղափոխվում է Լվով և դրվում հայոց եկեղեցում⁸²։

⁷⁸ Նույն տեղում, էջ 97։

⁷⁹ Ա. Պավլինսկի, Նշվ. աշխ., էջ 108։

⁸⁰ S. Barącz, Pamiątki..., էջ 17։

⁸¹ Я. С. Мельничук, Նշվ. աշխ., էջ 252։

⁸² S. Barącz, Pamiątki..., էջ 18։

1700 թ. Բրողիի վրա թուրք-թաթարական հրոսակախմբերի հարձակումից հետո յազլովեցյան հայերը տեղափոխվում են Լվով: Այստեղ նրանք 1710 թ. հիմնադրում են «Սուրբ Կույս Մարիամ Աստվածածնի անարատ հղության յազլովեցյան եղբայրությունը», որն ուներ 20.000 զլոտի հիմնադրամ: Հետագայում այդ փողերը մուծվում են Լվովի հայկական բանկը⁸³:

Թուրքերի ութամյա տիրապետության հետևանքով Յազլովեցի բնակչությունը խիստ նվազել էր, ուստի և լեհական իշխանությունները ձգտում էին նշանակալի գիշումների գնով պահել այնտեղ մնացած հայերին: 1690 թ. կըրկին հաստատվում են հայերի իրավունքները. նրանք դարձյալ ստանում են ներքին ինքնավարություն, ինչպես և առևտրով ու արհեստներով ազատորեն զբաղվելու արտոնություն: Բացի այդ, հայերը ազատվում են մի շարք հարկերից ու պարտավորություններից⁸⁴:

1700 թ. հայերի մի փոքրամիկ խումբ վերադառնում է Յազլովեց, բայց քանի որ քաղաքի բնակչության թիվն այնքան էլ մեծ չի եղել, նպատակահարմար է համարվել պահել ոչ թե առանձին դատարաններ, այլ միացյալ լեհ-հայ-ուկրաինական դատարան, որի 1715, 1716 և 1724 թթ. արձանագրությունների որոշ մասեր պահպանվել են և լույս ընծայվել Ս. Բարոնչի կողմից: Խիստ համառոտ կազմված այդ արձանագրությունները հնարավորություն են տալիս դադարափար կազմելու դատարանի կազմի ու նրա գործունեության որոշ կողմերի մասին: Դատարանը գլխավորել է վոյթ Յան Բոգդանովիչը, որը Յազլովեցի աչքի ընկնող հայերից էր և ըստ Բարոնչի, գրավել էր Յան Կոնեցպոլսկու ուշադրությունը: Քաղաքի բուրգմիստրը նույնպես հայ էր՝ Պավել Ասլանովիչը: 1716 թ. կազմված մի արձանագրության մեջ նա հիշվում է որպես ոսկերիչ-վարպետ: Արձանագրությունների մեջ ակնարկ կա այն մասին, որ հարկերը հանձնվում էին Կամենեց-Պոդոլսկում և որ Յազլովեցը 1716 թ. ամռանը ենթարկվել է մորեխների հարձակման: 1724 թ. վոյթ է հիշատակվում մեկ այլ հայ՝ Քժիշտոֆ Սեֆերովիչը: Հիշվում է նաև Լվովի հայ առաջնորդին ուղղված՝ յազլովցի հայ քահանա Սեմյոն Ստեչկեվիչի նամակը, որի մեջ խոսվում է Յազլովեցի հայ եկեղեցու կալվածքի և գյուղացիների հարկերի ու պարտավորությունների մասին: Վալերացված է հայուհի Ելենա Ավեդիկովայի կտակը, որով 100 զլոտի է հատկացված Յազլովեցի հայ քահանա Յուզեֆ Դավիդովիչին: Արձանագրությունների մեջ հանդիպում են լեհերեն, ուկրաիներեն, հայերեն և եբրայերեն ստորագրություններ⁸⁵:

Յազլովեց վերադարձած հայերը վերականգնում են նաև իրենց երիտասարդական կազմակերպության՝ «Կտրիճվորաց եղբայրության» գործունեությունը: Վերջինիս հաստատագրերից մեկը գրանցվել է 1714 թ. հուլիսի 14-ին⁸⁶:

1699 թ. Պոդոլյան վոյեվոդությունն ու նրա կենտրոն Կամենիցն ազատադրվում են թուրքական լծից: Կամենեց-Պոդոլսկը կիսավեր վիճակում էր. ցանկանալով նպաստել նրա վերականգմանը և տնտեսական զարգացմանը, լեհական իշխանությունների որոշմամբ Յազլովեցից Կամենից է փոխադրվում

⁸³ Նույն տեղում, էջ 120:

⁸⁴ О. С. Ко м п а н, նշվ. աշխ., էջ 93:

⁸⁵ S. Barącz, Pamiatki, էջ 140—141, 149:

⁸⁶ Հ. Տ ա շ յ ա ն, Յուդակ, էջ 924:

ամենամյա մեծ տոնավաճառը⁸⁷։ Այդ միջոցառումը բացասական նշանակություն ունեցավ Յազլովեցի համար։ Հետագայում, ժամանակ առ ժամանակ Յազլովեցում կազմակերպվող տոնավաճառները (1724 թ. դատական արձանագրություններում հիշատակվում է ս. Պողոսի ու ս. Պետրոսի օրն անցկացվող տոնավաճառը)⁸⁸ այլևս չէին կարող փրկել վիճակը, քաղաքն արդեն կորցրել էր առևտրական կենտրոնի իր դերը։

Յազլովեցի հայերը, որոնց թիվը զգալիորեն նվազել էր, կրկին սկսում են զաղթել։ Միաժամանակ ընթանում էր ազգաձուլման պրոցեսը, որն ավելի մեծ ծավալ էր ստացել կաթոլիկություն ընդունելուց հետո։ Մ. Բժշկյանի այցելության ժամանակ (1820 թ.) Յազլովեցում այլևս ոչ մի հայ չէր մնացել և նա հարկադրված էր արձանագրել հետևյալը. «Այժմ չիք անդ Հայ. զի կես մի ի նոցանէ անցին յԻվով, և կէս մի ի Կամենից և Սնևատին»⁸⁹։

АРМЯНСКАЯ КОЛОНИЯ ГОРОДА ЯЗЛОВЕЦ

(Краткая история)

В. Р. ГРИГОРЯН

(Р е з ю м е)

Язловец (ныне с. Яблунька, Бучачского района, Тернопольской области, Украинской ССР), один из древнейших населенных пунктов Подолии, был одним из излюбленных пристанищ армян, переселившихся в Подолию. Армянская колония в Язловце имела право самоуправления и была самым крупным центром армян в Подолии после Каменца-Подольского. В Язловце существовали армянские церкви, светский и духовный суд, армянская школа, ремесленные цехи, молодежная организация. Там был написан и иллюстрирован ряд армянских рукописей. Многие армянские и иностранные исследователи (Ст. Гювер Агопц, М. Бжиншкянц, С. Барон, П. Антонец, З. Обертинский и др.) в своих работах осветили ряд проблем истории язловецких армян, однако история колонии в целом оставалась неизученной. В данной статье делается попытка краткого изложения истории Язловецкой армянской колонии начиная с ее основания до второй половины XVIII в.

⁸⁷ Е. Сецинский, Город Каменец-Подольский, Киев, 1895, т. 2, 228.

⁸⁸ S. Bagdasz, Pamiętki..., т. 2, 149.

⁸⁹ Մ. Բժշկյան, նշվ. աշխ., էջ 130.